

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԱՆԱԳԵՏ-ԺՈՂՈՎՐԴԱԳԵՏԸ
(Վերծինե Սվազյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)



Հայ բանագիտության ռահվիրա Գարեգին Մրվանձտյանցն ու Սարգիս Հայկունին իրենց ժամանակին գրառել ու ներկայացրել են արևմուտահայության ապրած պատմաքաղաքական իրավիճակը, ժողովրդական բառ ու բանը, կյանքն ու կենցաղը՝ հասցնելով մինչև XIX դ. վերջ, սակայն հետագա XX դ. պատմական իրադարձությունները՝ Օսմանյան կայսրության Մահմանադրությունը (1908), մեկ տարի անց՝ Ադանայի կոտորածը (1909), ապա՝ Հայոց ցեղասպանության (1915-1923) ողբերգական և հերոսական դրվագները, որոնք ընդգրկում էին ոչ միայն Պատմական Հայաստանը, այլև՝ Կիլիկիան և Անատոլիայի հայաբնակ, արդեն իսկ ամայացած շրջանները, մնացել էին սոսկ ականատես վերապրողների հիշողության ծալքերում: Եվ ինչպես նշել է 1995 թ. Վ. Սվազյանի դոկտորական ատենախոսության ընդդիմախոս, բանասիրական գիտությունների դոկտոր Պիոն Հակոբյանը, «Կարելի է պատկերացնել, թե բանահյուսական և պատմագիտական ինչ վիթխարի ժառանգությունից կզրկվեր հայրենի գիտությունը, եթե ճակատագիրն ինքն ասպարեզ չհաներ Վերծինե Սվազյանի նման ըստ ամենայնի պատրաստված, քննախնդիր ու նվիրված բանասեր-բանագետին»:

1947 թ. Սվազյանների ընտանիքը զանգվածային ներգաղթով Եգիպտոսից հայրենադարձվեց Մայր Հայաստան: Հայրը՝ գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Գառնիկ Սվազյանը, որ Ալեքսանդրիայում հիմնադրել էր Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղը և «Սևան» մշակութային միությունը, իր 20-ամյա ընդհատակյա հասարակական-քաղաքական գործունեությամբ, հայրենասիրական դասախոսություններով, տարբեր պարբերականներում լույս տեսնող հրապարակախոսական հոդվածներով, քաղաքական բնույթի երգիծանկարներով և մանավանդ տարբեր գաղթօջախներում բեմադրված իր «Ներգաղթը» (Ալեքսանդրիա, 1936) թատերգությամբ աշխատել էր սփյուռքահայության սրտում վառ պահել ավերակներից հառնող, վերաշինվող Հայրենիքի պատկերը և նրա վերելքին գործնականապես մասնակցելու սրբազան պարտքի զգացումը: Նրա ազդեցությունը մեծ էր նաև դստեր՝ հայրենասեր ու նվիրյալ անձի ձևավորման գործում: 1956 թ. Վ. Սվազյանը «Գերազանցությամբ» ավարտում է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի Պատմալեզվագրական բաժինը: Ի մի բերելով Սփյուռքի և Հայրենիքի տարբեր պարբերականներում տպագրված հոր գրական-հրապարակախոսական ժառանգությունը՝ նա կազմում է «Հայրենիքիս համար»(Ե., 1965) խորագիրը կրող ժողովածուն:

1950-ական թթ. Վ. Սվազյանը «Սովետական Հայաստան» ամսագրի և այլ

պարբերականների էջերում, ինչպես նաև հեռուստատեսությամբ և ռադիոյով ներկայացնում է Հայրենիքում հանգրվանած տարագիր-գաղթական հայրենադարձների խաղաղ ու ստեղծագործ կյանքն ու կենցաղը, նրանց կրթական և մասնագիտական աննախադեպ վերելքը: Այդ ընթացքում նա արևմտահայի արյան կանչով և անձնական նախաձեռնությամբ թաղից-թաղ, գյուղից-գյուղ շրջելով՝ սկսում է գրի առնել (հետագայում նաև՝ ձայնագրել ու տեսագրել) մեր զավթված Երկրի՝ Պատմական Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայության բանավոր ավանդության տարբեր բարբառներով տարաբնույթ նշխարները, ինչպես նաև՝ Հայոց ցեղասպանության ականատեսների հուշերը:

1958 թ. աշխատել է Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: Այնուհետև ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Մ. Աբեղյանի անվան անհատական թոշակառու: Ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը, տեսնելով և գնահատելով նրա անձնական նախաձեռնությամբ և բարբառագիտական ճշգրտությամբ կատարած գրառումների բարձր մակարդակը, հակառակ իր բազմազբաղ ծանրաբեռնվածությանը, ստանձնում է նրա գիտական ղեկավարությունը՝ հանձնարարելով լուսաբանել մինչ այդ չուսումնասիրված ազգագրագետ-բանահավաք Ս. Հայկունու ժողովրդագիտական վաստակը: Ֆրանսիայից նոր ստացված Ս. Հայկունու աննշակ արխիվային նյութերն ուսումնասիրելով Վ. Սվազյանը շարադրում և այդ թեմայով հաջողությամբ պաշտպանում է իր թեկնածուական ատենախոսությունը (1965), իսկ «Մարգիս Հայկունի. Կյանքն ու գործը» մենագրությունը լույս է տեսնում «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 4-րդ հատորում (1973):

Վ. Սվազյանը 1960 թ. մինչև օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 1996-2004 թթ.՝ նաև ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատելու ընթացքում նա կազմել ու խմբագրել է 1915 թ. Արևմտյան Հայաստանի տարբեր զավառներից ոտքով Արևելյան Հայաստան հասած գաղթականների պատմած հեքիաթները, որոնք ահագնացող տիֆի համաճարակի պայմաններում գրի էին առնվել Սբ. Էջմիածնի վանքի պատերի տակ ծվարած այդ տառապալներից ազգագրագետ Երվանդ Լալայանի և նրա արշավախմբի ջանքերով: Դժվարությամբ վերծանելով արդեն իսկ անընթեռնելի դարձած այդ բնագրերը, նաև ճշտելով զանազան բարբառների տառադարձությունները, յուրաքանչյուր հեքիաթը ծանոթագրելով ու բարբառային բառերի բառարան ստեղծելով՝ Վ. Սվազյանն այդ նյութերը հրատարակել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական մատենաշարի «Արցախ-Ուտիք» (հ. VI, 1973), «Տարոն-Տուրուբերան» (հ. XII, 1984) և ավելի ուշ՝ «Վան-Վասպուրական» (հ. XV, 1998) պատմաազգագրական շրջանների հեքիաթները: Վերջինիս համար «Վան-Վասպուրական» հայրենակցական միությունը նրան շնորհել է «Պատվավոր վասպուրականցու» կոչում (1999):

Վ. Սվազյանն իր անձնական նախաձեռնությամբ երկար տարիների ընթացքում գրի է առել արդեն իսկ անհետացող՝ Մուսա Լեռան (Սվեդիա) երեք խրթին ենթաբարբառներով բանահյուսական տարաբնույթ նյութերը՝ զուգահեռաբար թարգմանելով գրական հայերենի: Որպես հմուտ բանագետ՝ նա իր բանահավաքչական գործունեությունը զուգակցել է գիտահետազոտական աշխատանքին և ժողովածուն օժտել է նաև քանակային վերլուծության նորագույն մեթոդով կատարված պատմաբանագիտական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությամբ: Այն լույս է տեսել «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 16-րդ հատորում՝ «Մուսա Լեռ» (1984) խորագրով: Մույն աշխատությունը 1985 թ. արժանացել է ՀԽՍՀ ԳԱ նախագահության «Գովեստագրին», ինչպես նաև՝ «Մուսա Լեռ» հայրենակցական ընդհանուր միության (Բեյրութ) «Պատ-

վավոր մուսալեռցի ոսկե մեղալին» (1985): Նա նաև կազմել ու խմբագրել է բնիկ մուսալեռցի Գրիգոր Գյոզալյանի «Մուսա լեռան ազգագրությունը» (2001) աշխատությունը: Վ. Սվազյանի «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը» (1994) սովորածավալ հատորն ընդգրկում է Կիլիկիայի և արևմտահայ 50 տեղավայրերի բանավոր մշակույթն իր բազմաբովանդակ կողմերով ու բարբառային նրբերանգներով: Հեղինակը պատմական փաստերի և իր գրառած ժողովրդագիտական նյութերի համադրմամբ ներկայացնում է հայկական Կիլիկիայի և արևմտահայության պատմամշակութաբանական շրջափուլերը՝ սկզբից մինչև մեր օրերը: Հայոց ցեղասպանության 80-ամյա հիշատակին է նվիրված Վ. Սվազյանի «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» (1995) աշխատությունը, որտեղ ամփոփված են կիլիկիահայ ականատես-վկաներից նրա գրի առած պատմափաստագրական բնույթի նյութերը:

Ի մի բերելով «Մուսա լեռ», «Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը», ինչպես նաև «Մեծ եղեռն. Արևմտահայոց բանավոր վկայություններ» աննախադեպ աշխատությունները՝ Վ. Սվազյանը շարադրել է «Կիլիկիայի հայոց բանավոր ավանդությունը» ընդգրկուն մենագրությունը, որի համար 1995 թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի կոչում: Այս աշխատության համար «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միությունը՝ նրան արժանացրել է «Պատվոգրի» (1995), իսկ «Զեյթուն» պատմամշակութային միությունը՝ «Պատվավոր զեյթունցի», «Հաճն» հայրենակցական միությունը՝ «Պատվավոր հաճրնցի» կոչումներին:

Վ. Սվազյանի գրի առած նյութերի մեջ փաստավավերական բացառիկ արժեք են ներկայացնում դերգորյան թուրքալեզու երգերը, որոնք 1997-1999 թթ. հայերեն, ռուսերեն, անգլերեն, իսկ թուրքերենը՝ 2005 թ. Ստամբուլում, հրատարարակվել են առանձին գրքերով՝ «Մեծ եղեռնը արևմտահայոց հուշապատմություն և թուրքալեզու երգերում» խորագրով: Պատմական տվյալների և իր գրառած ժողովրդագիտական նյութերի համադրմամբ ներկայացված են արևմտահայությանը բաժին ընկած ողբերգական կյանքի դրվագները, ինչպես նաև նրանց մղած արդար պայքարը՝ իրենց ապրելու տարրական իրավունքը պաշտպանելու համար: Գրքի անգլերեն տարբերակը զետեղվել է նաև համացանցում:

1996 թ. անխոնջ բանագետը, մասնակցելով Կ. Պոլսո Պատրիարքական աթոռի հիմնադրման 535-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին, նպատակադրվում և հետևողականորեն իրականացնում է Պոլսո վաթսուն հազարանոց հայ համայնքի մշակութային կյանքի ուսումնասիրությունը: Նա ժողովրդագիտական նյութեր է գրառում Պոլսո հայ համայնքում, Սբ. Փրկիչ ազգային հիվանդանոցի ծերանոցում, Իշխանաց կղզիներում և Սաման դաղիում (Մուսա լեռ): Սույն գրքի խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի բնորոշմամբ, Վ. Սվազյանի «հոգեռանդ նվիրումի» շնորհիվ լույս է տեսնում «Պոլսահայոց բանահյուսությունը» (Ե., 2000) արժեքավոր աշխատությունը, որն ընդգրկում է արդի պոլսահայությունից, ինչպես նաև Թուրքիայի գավառներից Ստամբուլ փոխադրված հայությունից, մասամբ նաև Հայաստան ներգաղթած պոլսահայերից հեղինակի գրառած բանավոր ավանդության տարաբնույթ նշխարները: Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) լեզվաբանական մասնաճյուղի տնօրեն, ֆրանսաբնակ հայագետ-դոկտոր Անահիտ Տոնապետյանը նշել է. «Արմատներով արևմտահայ հեղինակն իր այս աշխատասիրությունը հատուկ նպատակով ներկայացրել է արևմտահայերենով և դասական ուղղագրությամբ, որն անչափ կարևոր է Սփյուռքի գաղթօջախների հայության համար և՛ որպես դասագիրք, և՛ որպես ընթերցանության նյութ» (Պատմա-բանասիրական հանդես», 2001, N 3, էջ 290-291): Սույն աշխատասիրության համար Վ. Սվազյանը սփյուռքում արժանացել է մի շարք պարգևների. Փարիզի «Արարատ» հայագիտական ակադեմիան նրան

շնորհել է *պրոֆեսորի* կոչում (2004), Մոնրեալում (Կանադա) Պոլսահայ մշակութային միությունը՝ «Ոսկե մեդալ»(2005), Սիրիայում ՀԲԸՄ Հալեպի մասնաճյուղը՝ «Մեսրոպ Մաշտոց հուշամեդալ» (2005), իսկ Ալեքսանդրիայի (Եգիպտոս) հայոց քաղաքական ժողովը՝ «Նեղոսի Բանայի ոսկե հուշամեդալ»(2006):

Հայոց ցեղասպանության 85-ամյա հիշատակին է նվիրված Վ. Սվազյանի «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» (2000) խորագրով ստվարածավալ հատորը, որը լույս է տեսել Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ: Շուրջ հինգ տասնամյակների ընթացքում բանագետը ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Հունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Թուրքիա, իսկ հետագայում՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Կանադա կատարած իր գիտաժողովային ուղևորությունների ընթացքում նաև այցելելով այդ երկրների հայկական ծերանոցները՝ հետևողական պրպտումներով մշտապես որոնել ու հայտնաբերել է Հայոց ցեղասպանությունից հրաշքով վերապրածների, գրի առել, ձայնագրել նրանց պատմած սահմոկեցուցիչ հուշերն ու գրույցները, պատմական երգերն ու վիպերգերը (հայերեն և թուրքալեզու), որոնք մինչ այդ ոչ Հայրենիքում, ոչ Սփյուռքում մասնագիտորեն չէին գրառվել և ուսումնասիրվել: Հեղինակը, հուշերը ենթարկելով քանակական ու որակական վերլուծության, ընդգծել է, որ «...ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես էլ առանց հիշողության չկա ժողովուրդ: ...Հայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է քսաներորդ դարակրթին, անմիջականորեն ընկալվել է ականատեսների զգայարաններով, և այդ բոլորն անջնջելի կերպով տպավորվել է նրանց հիշողության մեջ» (էջ 15): Բացի հարյուրավոր հուշ-վկայություններից, այնտեղ ամփոփված են նաև նույնքան պատմական բնույթի երգեր (զինվորի, բանտարկյալի, տեղահանության, կոտորածի, ջարդի, որդեկորույս մայրերի, որբի, որբանոցի, հերոսամարտերի, հայրենաբաղձության, պահանջատիրության): Այս երգերն իրենց թեմատիկ ինքնատիպությամբ և գաղափարական բովանդակությամբ նորույթ են հայ բանագիտության և մանավանդ ցեղասպանագիտության բնագավառում, և դրանց շնորհիվ նորովի է ընկալվում պատմական տվյալ ժամանակաշրջանն իր բազմաշերտ ծալքերով: Վ. Սվազյանի սույն աշխատությունը հանրագիտարանային նշանակության բացառիկ գործ է, որը բացի պատմաճանաչողական վիթխարի արժեքից, ունի նաև քաղաքական, արդիական նշանակություն: Այս ժողովածուն ամենավավերական մեղադրանքն է՝ ուղղված թուրք ոճրագործներին և նրանց ժառանգորդներին, որոնք այսօր հետևողականորեն կեղծում են պատմությունը: Այս առումով ճշմարիտ է հատորի խմբագիր Ս. Հարությունյանի խոսքը. «...Ականատեսների հուշապատումներն ու մանավանդ թուրքալեզու երգերն ունեն պատմական վավերագրերի արժեք ոչ միայն այդ ժամանակաշրջանի մեր ողբերգական պատմությունը ճիշտ հասկանալու և ըմբռնելու իմաստով, այլև Հայ Դատի պաշտպանությունն առավել հիմնավորելու և հատկապես թուրք ու թուրքամետ պատմաբաններին հենց թուրքալեզու երգերով ու նրանցում հնչող մեղադրանքներով հակահարված տալու առումով» (էջ 12): Այս աննախադեպ աշխատության համար, որը «կարևոր ներդրում է Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության պատմության և հայ պատմագիտության բնագավառում» հեղինակն արժանացել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Պատվոգրին»(2000), Սփյուռքի Թեքեյան մշակութային միության «Հայկաշէն Ուզունեան» գրական-բանասիրական մրցանակին (2002), ինչպես նաև ՀՀ ԳԱԱ նախագահության և «Ճշմարիտները հայերի համար» միջազգային կոմիտեի «Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալին» (2003):

Վ. Սվազյանը Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակին է նվիրել «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» խորագրով ուսումնասիրությունը՝ թարգմանված վեց լեզուներով (2003) հայերեն,

2004 և 2005՝ անգլերեն, 2005՝ ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն, թուրքերեն. վերջինս՝ Ստամբուլում): «Ցեղասպանագիտության մեջ ձեռք բերած վաստակի համար» նրան շնորհվել է ՀՀ կառավարության «Հուշամեդալ» (2005), նաև՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու համար» ՀՀ նախագահի Առաջին մրցանակ և ոսկե հուշամեդալ (2006):

Վ. Սվազյանին է պատկանում նաև «Հայաստան» ծավալուն և բազմաբովանդակ անգլերեն հոդվածը՝ տպված «Համաշխարհային բանահյուսություն և ժողովրդական կենցաղ» խորագիրը կրող քառահատոր մեծադիր հանրագիտարանում (*London, 2006, V. 2, pp. 357-372*): Այստեղ հայ ժողովրդի բանահյուսությունը ներկայացված է պատմական հենքով՝ սկսած հազարամյակների խորքից մինչև մեր օրերը: Հոդվածում նշված է նաև, որ հայ ժողովուրդը ենթարկվել է XX դ. առաջին ցեղասպանության, կորցրել է իր գենոֆոնդի և պատմական բնօրրանի զգալի մասը, և ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը պատմական հայրենիքի 1/10 մասն է կազմում, և որ ազգային այդ մեծ ողբերգությունը հանգամանորեն ներկայացված է ականատես վերապրողների վկայությունների և պատմական բնույթի երգերի մեջ: Հայ ժողովրդի բանահյուսությունն ու կենցաղը համաշխարհային հեղինակավոր հանրագիտարանի միջոցով առաջին անգամ աշխարհին ներկայացնելու համար Ամերիկյան կենսագրական ինստիտուտը Վ. Սվազյանին շնորհել է *“The Great Mind of the 21st Century”* («21-րդ դարի մեծագույն միտք») տիտղոս և հուշամեդալ:

Վ. Սվազյանը մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, զեկուցումներ կարդացել սփյուռքահայ գաղթօջախների տարբեր կազմակերպություններում (Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Միլիա, Եգիպտոս, Թուրքիա)՝ հանդես գալով բանագիտությանը, ժողովրդագիտությանը, ցեղասպանագիտությանը և Հայ դատին առնչվող թեմաներով:

Այժմ Վ. Սվազյանը հրատարակության է պատրաստում ԱՄՆ կատարած իր անձնական և գիտաժողովային այցելությունների ընթացքում (1979, 1989-1990, 2001, 2008) տեղի հայ համայնքից գրի առած ժողովրդագիտական տարաբնույթ նյութերը:

Վ. Սվազյանը 500-ից ավելի գիտական և հրապարակախոսական հրատարակությունների, ընդ որում երկու տասնյակից ավելի գրքերի հեղինակ է, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտերկրում: 2009 թ. իր հորեյանի առթիվ նա արժանացել է ՀՀ կրթության և գիտության նախարարության «Պատվոգրին», իսկ Հայաստանի ազգային գրադարանի տնօրինությունը նրան շնորհել է «Հայ առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտ», «Մուսա լեռ» հայրենակցական բարեգործական միության նախագահությունը՝ «1915. Հավերժ փառք Մուսա լեռան հերոսներին» հուշամեդալները:

Ավելի քան 55 տարիների տքնաջան նվիրումով և իր ծանրակշիռ վաստակով բանասիրական գիտությունների դոկտոր, բանագետ, ժողովրդագետ Վերժինե Սվազյանը ոչ միայն անհետ կորստից փրկել և գալիք սերունդներին է ավանդել մեր զավթված Երկրի մշակութային բանավոր հարստությունը, այլև տարբեր լեզուներով աշխարհին է ներկայացրել հայ ժողովրդի պատմական հավաքական հիշողությունը:

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ս. Ա.

Բանասիրական գիտությունների թեկնածու